


ԾԱՂԻԿ շարաթը երկու անգամ կը հրատարակուի Չորեքարթի եւ Շաբաթ օրերն : — ասորեկան բաժանորդագրութեան գինն է 100 դրուշ արծաթ : — Վեցամսեայն 50 . — Գաւառաց հոմար 115 դրուշ . — Վեցամսեայ 60 . — Ծանուցման տողը 5 դրուշ :

ԽՄԲԱԳԻՐ
Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ



Որ եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել :

Ա. Արտոնատեր և Տնօրէն
ԱՆՏՕՆ ՍԱՔԱՅԵԱՆ
Էսկի Զապթիյէ Ճատտէսի
Նշան էՖ. Պերպերեանի Տպարանն :

Խմբագրութեան յանձնուած գրութիւնք եւ չեն տրուիր :

ԱՐՏՕՆԱՏԵՐ
ԱՆՏՕՆ ՍԱՔԱՅԵԱՆ

40 ՓԱՐԱ

Հ Ա Ն Դ Է Ս

ՓԱՐԱ 40

Ա Ձ Գ Ա Յ Ե Ն ԵՒ Զ Ա Ղ Ա Բ Ա Կ Ա Ն

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ազգային Տեսութիւն (Պատրիարքական ծրարագիր) . — Ս. Թարգմանչաց տուն . — Մրցում . — Ս. Պատրիարքն ի Կոյսերական պալատ . — Գեր. Իլմիրեան Սրբազան . — Զոհր . — Ցաւակցութիւն . — Այլ և այլք . — Բարբ . — Պառաւանց բառարան . — Վիպասանութիւն՝ Անի՞ծեալ աղջիկը . — Ծանուցմունք

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՊԵՏՐԻՍՐՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Առաջնորդական վիճակաց վերակազմութեան մասին Ամեն. Ս. Պատրիարք Հօր Մրագիրն հրատարակուած և Յանձնաժողովոյ մը կողմէ քննութեան ենթարկուած է :

Մենք այդ Մրագրի վրայ յօշուած առ յօղուած քննութիւն չպիտի կատարենք . վասնզի ինչպէս Մրագիրն , նաեւ ամենայն քննադատութիւն անձնական փորձառութեան արդիւնք չէ , այլ միջոց մը միայն , ոյր նպատակն է պատշաճ ձեւ մը տալ Առաջնորդական Վիճակաց կազմակերպութեան :

Առաջարկեալ ձեւն պատշաճ է անշուշտ և բանաւոր , եթէ համաձայն է Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ ոգւոյն , սկզբանցը և ժամանակիս պիտոյ յից և պահանջմանց :

Յանձնաժողովն ի հարկէ այս կէտերու վրայ կը կատարէ զիւր քննութիւն և Ազգ. ժողովն ալ ի հարկէ պիտի վաւերէ , եթէ Ամեն. Ս. Պատրիարք Հօր Մրագիրն լրացուցած է նոյն անհրաժեշտ պայմանները :

Բայց մեզի համար դիտելի էական կէտն այն չէ թէ օրէնք մը որ նոր է , թերի կողմեր պարունակէ , այլ այն է թէ օրէնքն արդեօք գործադրելի պիտի լինի :

Օրինաց թերին հետզհետէ կը լըցուի փորձառութեամբ , սակայն իբր մեռեալ տառ անզօր կըլինայ օրէնքն , երբ հաւասարապէս չգործադրուի ամենուն վրայ , և կամ ըսենք , աչառութիւն լինի բացառաբար :

Աչառութիւնք են որ բարքերու վրայ ապականարար ազդեցութիւն կ'ընեն և ոչ թէ օրինաց թերին , որ ժամանակի խնդիր է պարզապէս :

Ուստի , բուն խնդիրը ոչ թէ օրինաց անթերի լինելուն , այլ խղճամիտ գործադրութեան վրայ է :

Այս է էական պէտքը ; որ դժբաղդաբար մեր մէջ կը պակսի ի բաց առեալ խիստ հազուադէպ բացառութեամբ մը միայն :

Մեր կարծիքով լաւագոյն է թերի օրէնքը որ գործադրելի է քան զայն օրէնք , որ խիստ լաւագոյն լինելով հանդերձ խղճամիտ կերպիւ գործադրուի :

Յայտնի է թէ սոյն պայմանի մէջ

օրէնքն իսպառ կորուսանելով իր բարոյական ոյժ և ազդեցութիւն , յայնժամ աչառութիւնք կ'անցնին օրինաց տեղ և օրէնքն կը դառնայ իբր խաղալիկ մը :

Ոչ մէկ եկեղեցի այս եղանակաւ կը կառավարուի , մանաւանդ թէ Հրոնվմէական և Բողոքական միսիօնարաց յաջողութիւնն կը փայլի կարգապահութիւն (տիսիփլին) կոչուած բանին մէջ , որ ի մեզ դժբաղդաբար իւր բացակայութեամբ կը փայլի , և ոյր պատճառն է այն ակներեւ պակասութիւնք , ում ենթարկեալ են ստէպ մեր Ազգային Վարչութիւնք իւրեանց Ս. Տախազահով այն է , չփայլեցնելով իրենց վրայ կորով , հաստատամտութիւն և երկաթեայ կամք :

Արդ , երբ ունինք սոյն անհրաժեշտ պայմաններով օժտեալ Վարչութիւն , չվախնանք օրինաց թերութիւններէ , բայց վախնանք յայնժամ . եթէ լաւագոյն օրէնք ունենալով հանդերձ չունենանք սակայն զօրաւոր Վարչութիւն :

Ահա այս է մեր կարծիք և տեսութիւն նկատմամբ Պատրիարքական նոր Մրագրին , որ կրնայ օգտակար լինել , եթէ իւր ինչ ինչ պակասութիւններով հանդերձ խղճամիտ կերպիւ գործադրուի առանց բնաւ աչառութեան և բացառութեան :

Ս. ԹԱՐԳՄԱՆՁԱՑ ՏՕՆ

Սոյն ազգային մեծ տօն նշանակելի շքեղութեամբ և մեծ ոգեւորութեամբ կատարեցաւ նախընթաց օր մայրաքաղաքիս Եկեղեցեաց և վարժարանաց մէջ ի պատիւ բազմաբախտ յիշատակի երանանորհ Ս. Թարգմանչացն, որ եղան մեծագոյն Բարերարք Ազգային-Եկեղեցւոյ և Հայր դպրութեան:

Նոյնպէս, նոյն օր տեղի ունեցաւ բարեյիշատակ Աղա Յովսէփ Իզմիրլեանցի կտակի Դ. Տարեդարձն ի սրբահի Ազգ. ժողովոյ ի ներկայութեան ընտրելագոյն եկեղեցական Ս. Հարց և զբազիտաց:

Մնայուն Յանձնախմբի կողմէ Արժ. Տ. Մկրեան Հայր կարգաց տեղեկագիրը, որ մեծ պատիւ կը բերէ յիշեալ Պատ. Յանձնախմբի խղճամիտ գործունէութեան և հոգածութեան:

Այս տարի ներկայացեալ էին գըրական մի քանի գործեր Յանձնախմբի գնահատութեանը, բայց և ոչ մին ի նոցունց արժանացաւ մրցանակի, վասնզի Գննիչ Տեարց տեղեկագիրք նպաստաւոր կարծիք չէին յայտնել և միայն Խորենացիի Թարգմանութեան համար Մնայուն Յանձնախումբն արժան դատած էր 20 Օսմ. ոսկւոյ վարձատրութիւն մը սահմանել, և այն ալ միայն գործին ծանր աշխատութեանն համար:

Արդարը խօսելով այս տարի Քըն. նիչ Տեարց Տեղեկագրերն արժանի էին մրցանակի, զոր անշուշտ պիտի ըստանային, եթէ Աղա Իզմիրլեանցի կտակը նախատեսած լինէր զայս պարագայ:

Ուրեմն պատիւ Գեր. Հայր Սուքիաս Պարոնեանի, Գեր. Եղիշէ Մ, Վ. Դուրեանի և Մեծ. Ռ. Պէրպէրեան էֆէնտիի:

Կը ցաւինք որ թերթիս սիւնակները չեն ներեր հրատարակել զայդ տեղեկագրեր, որ իրաւամբ ընթերցման արժանի են, և Պատ. Մնայուն Յանձնախումբը խիստ լաւագոյն գործ մը կընէ, եթէ բարեհաճի համայն տեղեկագրերն որ մատուցուած են սկիզբէն, առանձինն հրատարակել, զի թէ իբր գրական գործեր և թէ քննադատութիւն մեծ արժէք ունին:

Դոհացուցիչ է տեսնել թէ Պատ. Յանձնախումբն իւր բարւոք մատակարարութեամբ աւելցուցած է իբր 500 Օսմ. ոսկւոյ գումար մը, որ կը ծառայէ իբր պահեստի դրամագլուխ, որոյ տոկոսովն կը հայթայթէ իւր ըստիպողական ծախքեր:

Համակրելի Ատենապետն Մնայուն Յանձնախմբի—Վսեմ. Գ. Նորատունկեան էֆէնտի—կ'աշխատի այժմ սահմանել մրցանակ մը դասագրաց համար հայթայթելով առ այս հարկ եղած դրամագլուխն:

Ն. Վսեմութեան սոյն ձեռնարկ վեր է ամեն գովեստէ, զի շատ բարենպատակ է և անշուշտ մեծ զարկ պիտի տայ ընտիր դասագրաց պատրաստութեան:

Մաղթելի է որպէս զի Ն. Վսեմութեան սոյն արդիւնաշատ խորհուրդ յաջողութեամբ պսակուի յօգուտ երկսեռ ուսանողաց խնամեալ դաստիարակութեան:

Կնքելով մեր խօսքն՝ ի խորոց սրբտէ կը յայտնենք երախտագիտութիւն Ազգային Բարերար Աղա Յովսէփ Իզմիրլեանցի սուրբ յիշատակին և խորին շնորհակալիք առ Մնայուն Պատ. Յանձնախումբն իւր խղճամիտ գործունէութեան և ազնիւ հոգածութեան համար:

ՄՐՅՈՒՄ

Անցեալ շաբաթ օր տեղի ունեցաւ ի խորհրդարանի Ղալսթիոյ Պատ. Ուսումն. խորհրդոյ սահմանած չրջանաւարտից մրցումն ընդ նախագահութեամբ Ատենապետին Ուսումն. խորհրդոյ Ազնուա. Տօքթ. Թիրեաքեան էֆէնտիի և հրաւիրեալ եկեղեցական և աշխարհիկ անձանց:

Մրցման ներկայացած էին Պէշիկթաշի Մաքրուհեան վարժարանի և Պէօլիւկ.տէրէի երկսեռ չրջանաւարտք, որ, ըստ մեր մասնաւոր տեղեկութեան, յաջողապէս անցուցեր են իւրեանց չրջանաւարտի քննութիւնը:

Կը ցաւինք որ մի քանի աւուր համար մայրաքաղաքէս բացակայութեան պատճառաւ չկրցինք պատասխանել առ մեզ եղած հրաւերին:

ՀՐԹ.ԺԱՐԱԿԱՆ

Որպէս յայտնի է, Ազգ. վարչութեան Բաղաքական ժողովոյ Ատենա-

դպիր Ազնուա. Մկրտիչ էֆէնտի Մանուկեան ժողովոյ անդամակցութենէ հրաժարական տուած և զոր սակայն ժողովը միաձայնութեամբ մերժած և խնդրած է որպէսզի բարեհաճի ազատիրաբար ետ առնուլ զիւր հրաժարական և շարունակել իւր կարեւոր պաշտօնը:

Կիմանանք թե Մանուկեան էֆէնտի կրկնած է իւր հրաժարականն և կը պնդէ,

Մանուկեան էֆէնտիի հրաժարման ներքին պատճառը, թէպէտ ճշդիւ չենք գիտեր, բայց ինչ որ ալ ըլլայ խիստ կարեւոր է իւր ներկայութիւնը Բաղ. ժողովոյ մէջ, վասնզի լաւ խորհող, կշռող, դատող և գործող անձնաւորութիւն մ'է, և իրաւամբ կը վայելէ ընդհանուրի սէրը, յարգանքն և համակրութիւնը:

Ջերմապէս փափագելի է զի իւր հրաժարման պատճառը—եթէ անձնական զբազում չէ—բարձուի և անցնի ի պաշտօն իւր:

Ս. ՊԱՏՐԻԱՐԿՆ Ի ԿԱՅՍ. ՊԱՂԱՏ

Ամեն. Ս. Պատրիարքն երէկ Կայս, պալատ երթալով մեծ պատուով և յարգանքով ընդունուեր է Ա. Բարտուղար Վսեմ. Սիւրէյա փաշայի կողմէ:

Կըսուի թէ Ն, Ամենապատուութիւն այսօր վերստին կերթայ ի Կայս, պալատ:

ԳԵՐ. ԻՉՄԻՐԼԵԱՆ ՍՐԲԱՁԱՆ

Գեր. Տ. Մաթէոս Ս. Արքեպիսկոպոս Իզմիրլեանց այս շաբթու մայրաքաղաքս ժամանց:

Կըսուի թէ Ն. Գերապատուութիւն հրաժարեր է Եգիպտոսի առաջնորդութենէ ի հարկէ այնպիսի պատճառներու համար, որ դժբաղդաբար անյաղթելի դժուարութիւնք և խիստ ծանր արգելքներ կը ներկայեն:

Գեր. Իզմիրլեան Սրբազան ցարդ տոկալով այդ ամենուն, ինչպէս և առ ոչինչ գրելով իւր հիւանդագին վիճակի անձկութիւններն, խիստ արգիւնաւոր պաշտօնավարութիւն մ'ունեցաւ յեգիպտոս գրաւելով ընդհանրա-

պէս կարող և ընտրելագոյն դասուն սէրն ու համակրանքը :

Յաւալի է որ կարգ մ'անձինք իւրեանց յարուցած անվերջանալի դժուարութիւններով—յորս ազգին և եկեղեցւոյ ճշմարիտ շահն իր բացակայութեամբ կը փայլի—հուսկ ապա պատճառ եղան ն. Սրբազնութեան հրատարմանը, մինչդեռ Գեր. Իզմիրլեան խիստ արժանապէս կը ներկայացնէր զԱզգն Եգիպտոսի նման կարեւոր գաւառի մը մէջ :

Իւ երբ Գեր. Իզմիրլեանի նման պարկեշտ, պարտաճանաչ և ժրջան Առաջնորդ մը վերջապէս հրատարիլ կը հարկադրի, դժուար չլինիր յայնժամ ըմբռնել ծանրութիւնն այն անյաղթելի դժուարութեանց և արգելքներու, զորս յարուցանելէ չեն դադարի կարգ մ'անխիղճ անձինք, ոյց արարք յաւետ դատապարտելի են :

Զ Ո Ն Ը

Ո՞վ լսեց և չյուզուեցաւ չարաղէտ մահն Մկրտիչ Գարագաշեանի, որ ընդ երկար սիրտ մաշեցնելէ յետոյ ուսուցչական ապերախտ ասպարիզին վրայ, հուսկ ապա անիրաւութեան մը զոհ գնաց ճիշդ այն օրն, երբ իւր սանուհիք ծաղկեփունջերով կը պսակուէին Պէղճեան և Լուսաւորչեան վարժարանաց մրցանակաբաշխութեան հանդիսին առթիւ և ծափեր կը խլէին ի հանդիսականաց :

Ահաւասիկ եղելութիւնը, զոր կը պարզենք :

Մկրտիչ Գարագաշ համեստ ամսականաւ մը — 300 դահեկան — իբր տասն տարի Լուսաւորչեան վարժարանի մէջ մայրենի լեզուի (այցելութեամբ) ուսուցչութեան պաշտօնը յաջողապէս վարելէ յետոյ, նախորդ առժամանակեայ Թաղական խորհուրդը իբր թէ իւր պիւտճէն հաւասարակշիռու նպատակաւ կիսովին կը զեղչէ նորա ամսականն, որ ինչպէս յայտնի է, Կարգ Բարե Եւր ընդ Բեզ Բեզ Բեզ Բեզ, զոր խիստ լաւ ըմբռնելով խեղճըն կը հարկադրի հրատարիլ ի հարկէ սաստիկ զգածեալ, և ահա սոյն դառն տպաւորութեան ներքեւ օր ըստ օրէ կը խանգարի իւր ջղային դրու-

թիւնը և հուսկ ապա կը կնքէ իւր մահկանացուն ի մեծ ցաւ իւր այրւոյն և զաւակացը, մինչդեռ այդ Թաղ, խորհուրդ ամսականին վրայ յաւելում կ'ընէ այն պաշտօնէին, որ պարզապէս Խալիք համար միայն պահուած է :

Կը հարցնենք, եթէ անկարող ոք էր Մկրտիչ Գարագաշեան, ինչո՞ւ տասն տարի իւր պաշտօնի վրայ պահուած է, և թէ ի՞նչ կը նշանակէին այն ծաղկեփունջեր և ծափեր, որք կը նուիրուէին շրջանաւարտ աշակերտուհեաց, որ իր—հանգուցելոյն—սանուհիքն են :

Շատ բնական է ուղղել այդ հարցումներ աւելցնելով միանգամայն թէ միթէ այսպէ՞ս պէտք է վարուիլ ազգային անխոնջ աշխատաւորի մը, կըրթական գործիչի մը հետ, մանաւանդ այնպիսի ժամանակի մէջ, յորում կը պարծինք թէ Սահմանադրութիւն և Ուսումնական խորհուրդ ունինք :

Բայց ինչո՞ւ մեղադրել Ուսումնական խորհուրդն, երբ չեն յարգուիր իւր հրահանգներ և տնօրինութիւններ, քանի որ Թաղ, խորհուրդք անպատասխանատու և քեֆէն մարմիններ են գրեթէ մեծ մասամբ :

Այսպիսի վիճակի մէջ ինչպէս կարելի է վարժարանաց իրական յառաջադիմութիւն, բարեկարգութիւն և այլն սպասել, քանի որ քեֆէն կը շարունակէ, թէեւ ամիրայական իշխանութիւնը բարձուած է :

Այո՛, անուամբ և եթ բարձուած է, բայց ամիրայութիւնը տակաւին կանգուն կը մնայ, սա միակ տարբերութեամբ սակայն թէ հին ամիրայք ընդհանրապէս խղճահար և բարեգործ մարդիկ էին, իսկ այժմու ամիրաները—ըսել կուզենք կարգ մը թաղական աղաներ—Ազգին դրամովը ամիրայութիւն կը ծախեն Սահմանադրութեան անունի ներքեւ, այն է, ըստ կամաց գործելով :

Ո՞վ բարք, ո՞վ յամանակ :

ՅԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Մեր խորին ցաւակցութիւնը կը յայտնենք առ Մեծ. Պողոս Էֆէնտի Թակոբեան վասն այն կորստեան զոր

ունեցաւ յանձին իւր եղբոր՝ Մեծ. Պետրոս Էֆէնտի Թակոբեանի, որ ուսեալ, ազնիւ և պարտաճանաչ երիտասարդ մ'էր :

Հանգուցեալն ընդ երկար ծառայած է պատերազմական գործոց դըրան ճանտարմա տաիրէսի կոչուած պաշտօնատան մէջ և իւր հաւատարիմ գործունէութիւն գնահատուած է ամենայն կերպով :

Յուզարկաւորութիւնն երէկ կատարուեցաւ արժանավայել հանդիսիւ Պէյգօզի Ս, Նիկողայոս եկեղեցին ուր խռնուած էր մեծ բազմութիւն մը որ փութացած էր իւր վերջին յարգանքը նոնիրել ողբացեալ Թակոբեանի անշունչ մարմնոյն :

ԳՐԻԳՈՐ ԶԱՔԱՐԵԱՆ

ՎԿԱՅԵԱԼ ՓԱՍՏԱԲԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ՛ իւր գըրասենեակը հաստատած է Պօլիս, Պողչէ Գափու, Համիտիյէ Թիւրպէտի կից Գազաքէր խան թիւ 6 :

Եւ թէ՛ կտանձնէ վարել ամէն կարգի գտներ չափաւոր պայմաններով, և խըմբադրել թուրքերէն, հայերէն և Փռանսերէն լեզուներով ամէն տեսակ դատական և վաճառականական գրութիւններ :

Պարզ խորհրդակցութեանց համար փոխարինութիւն չպահանջուիր :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Դասարանի մէջ :

Ուսուցիչ — Ըսէ տեսնեմ, Թակոբիկ, եթէ 6 օխա հացը 6 շրուշ ըլլայ, 1 օխան քանի՞ կընէ :

Թակոբիկ. — Դործը գիտէ, միւսիւ Ուսուցիչ. — Ինչէ՞ն գործը գիտէ : 10 օխան 40 փարա չընե՞ր :

Թակոբիկ. — Աղէկ, բայց, այսօրուան հօցը վաղը 35 փարայի կը ծախուի :

* * *

Պարոն Բի ոպասուհին չարաչար աշխատող բայց միշտ մոռացկոտ է. ամեն անգամ որ սեղան կը շտկէ շիշ մը, դաւաթ, աղ ևն, կը մոռնայ սեղանին վրայ դնելու : Ըստ սովորականին սպասուհին երեկոյ մը դարձեալ կը մոռնայ այս անգամ աղ դնելու սեղանին վրայ :

Պարոն Գ.—Մարիամ, գնա ամենէն վերի յարկէն սանդուխը վար բեր:

Մարիամ արդէն յոգնած ըլլալով տրտնջալով կերթայ և շատ դժուարութեամբ սանդուխը վար կը բերէ:

Պ. Գ.—Հիմա այդ սանդուխը պատին կրթնցու, հա՛ աֆէրիմ, վեր ելի և ամենէն վերի ոտքին վրայ կանխէ. հա ապրիս. հիմա քու տեղդ բարձր ըլլալով մենէ աղէկ կրնաս տեսնել սեղանին վրայ թէ աղ չկայ:

Մարիամ այնուհետեւ կողղուի իւր մոռացկոտութենէն:

* * *

Անժել և Գրիգոր զիրար կը սիրեն. Գրիգոր չհամարձակիր առաջարկել Անժելի իրեն հետ ամուսնանալու. Անժել եւս, թէեւ խիստ փափագող Գրիգորը իրեն ամուսին ունենայու, բայց բնականաբար չհամարձակիր խօսք բանալու:

Ժամանակ մը այսպէս անցնելէ յետոյ Անժել օր մը խորհուրդ մը կը յղանայ տանը մէջ ֆոնօկրաֆ (ձայնագիր) մը կար, կառնէ զայն իւր սենեակը կ'առանձնանայ և յետագայ մի քանի խօսքերը կը զրուցէ խողովակին մէջէն. «Ա՛հ, արդեօք ե՛րբ Գրիգորին ք իրեն կնութեան պիտի առաջարկէ զիս, եթէ այսպէս շարունակէ. վերջս գէշ պիտի ըլլայ, ևս ևս. և յետոյ գոցելով իւր դարանին մէջ կը պահէ առաջին առթիւ գործածելու համար:

Հետեւեալ օրը, Գրիգոր շքեղ կերպիւ հագուած և քարզարուած կ'երթայ Անժելը տեսնելու. Անժել կը հրամայէ զինքն ի սալօն ուր արդէն ձայնագիրը սեղանի մը վրայ դրուած էր. քիչ մը հանգիստէն վերջ. Անժել դուրս կելլայ պատրուակաւ մը. Գրիգոր մինակ մնալով սեղանին կը մտենայ և ձայնագիրը տեսնալով հետաքրքրութեան կսկսի դարձնել թէ արդեօք մէջը խօսք մը կ'որ. որուն արդիւնքը կը ըլլայ հետեւեալը. «Ա՛հ Տիգրանս . . . քու վրայ ունեցած սէրս չեմ կրնար բացատրել . . . Ա՛հ երբ պիտի միանանք արդեօք Անժելիկս . . . ե՛րբ որ ուզես պատրաստ եմ . . . ա՛հ . . . մնաս բարով Անժելիս . . . » Գրիգոր բարկութենէն կրակ կտրած ձայնագիր սեղանէն գետին կը տապալէ, և արագութեամբ տունէն դուրս

նետուելով քան թէ ելլելով, կը վազէ առանց մտիկ ընելու Անժելի աղաղակաց, որք յետո կը կոչէին զինքը.

Բայց ինչ պատահած էր ձայնագրին, որուն մէջ այսպիսի խօսքեր արտասանուած չէր:

Ահա եղելութիւնը.

Անժելի պատիկ Ծ տարեկան եղբայրը Պետրոս չարածճին՝ իւր քրոջ սենեակը առանձնացած ըլլալը տեսնելով՝ դրանը բանալն այն ժակէն ներսը դիտած էր թէ քոյրը այլ և այլ խօսքեր կարտասանէր. և դիտելով թէ Անժելի ձեռքը տուփի պէս բան մը կար, զայն դարանին մէջ դնելն ալ կը նշմարէ և երբ Անժել դուրս կելլայ բոլորովին անգիտակ իւր եղբորը ներկայութենէն. Պետրոս ներս կը մտնայ և տուփին մէջի եղած խօսքերը պարպելով, տեղը Գրիգորի լսած խօսքերը կարտասանէ:

* * *

Պարասրահի մէջ.

—Քանի՛ եղբայր ունի, պարոնը:
—Մէկ հատ միայն, Տիկին:
—Չարմանալի բան, քիչ մ'առաջ ձեր քրոջ հարցուցի և պատասխանեց թէ երկու եղբայր ունէր:

* * *

Հայր մը իւր որդւոյն պարապ շիշ մը կուտայ մօտակայ գինետունէ մը օդի առնելու համար:

Տղան.—Հայրիկ, բարան չտուիր նէ:

Հայր.—Բարայով ես ալ կառնեմ: մարիֆէթ բարասըգ առնելու է:

Տղան քիչ մը վերջը կը վերադառնայ.

Հայրը շիշը բերնին տանելով խմելու զած ատեն բարկութեամբ կը գոչէ.
—Աս ի՛նչ է, աս պօշ է նէ:

Տղան.—Լեցուն ըլլայ նէ ես ալ կը խմեմ: մարիֆէթ պօշ շիշէն խմելու է:
ՊԵՏՐԻ

14 յունիս 1390

Գատը-գիւղ

ՏՕՔԹՕՐ ԱՐԱՊԵԱՆ

Այս անգամ ֆարիգէն վերադարձած ըլլալով ամեն օր ժամը 8—10 կը գտնուի Եէ՛րբարու Սար՝ մէֆէնտի Կարապետեանի թիւ 3 գեղարանն, ուր երկըջարթի օրեր ձրի կը դարմանէ իրեն զիմող ազքատ հիւանդները:

Նաեւ յիշեալ գեղարանը կը գտնուի հեղուկ մը ընդդէմ գլխի թեփերու և կարգիւ մազերու թափումը:

Այս գեղի օգտակարութիւնը փորձով հաստատուած է:

Բ Ա Ր Ք

Վառվառ խաթուն իւր հարսին թախանձանաց վրայ կը զիջանի Եէտիքուլէ երթալ նորա մէկ ազգականին այցելութիւն մը տալու համար. Որովհետեւ խաթուղ կը բնակէին, որոշեցին Սիրքէճիէն երկաթ ուղիով երթալ: Վառվառ խաթուն առաջին անգամն էր որ երկաթուղիով պիտի ճամբորդէր, մնաց որ քսան տարիներէ հետէ իւր բնակած գիւղէն հեռացած չէր: Բոլոր ուժերը պահած պառաւներէն էր բերնին եկածն արձակ համարձակ կըսէր առանց հոգ իրենց թէ իւր խօսքերն ինչ տեսակ տպաւորութիւն կընեն լսողներուն վրայ: վերջապէս կը խօսէր, կը շարժէր ինչպէս կընեն խիստ գուեհիկ դասուն վերաբերեալ կանայք՝ իւր հարսը նոր ամուսնացեալ ունտիկ աղջիկ մ'էր դեռուհայտ կ'եսերը քով իւր կեցուածքէն յայտնի էր որ ամէն կերպով անոր կը հպատակէր:

Կէս օրէն քիչ մը առաջ Վառվառ խաթուն Կ. Պոլսոյ կայարանէն ներս կը մտնէր իւր հարսին հետ մեծ հիւանդամբ կը դիտէր շուրջը. Վո՛ւշ, վո՛ւշ, վո՛ւշ, քա սս ինչ տեղեր աս ինչ պաներ, ինչ պաներ. քէօռի պէս տունը նստեր եմ ամմէն պան փոխուեր ու փոխիխուեր է. քա՛, կիտես քի տուրս կացերենք, հարս, (կայարանին պարտէզը դիտելով) քա՛, սա պախճաները նայէ՛, բիւթիւն էլչիներ մատամներով կը պտըտին կոր, չորստին ալ սահաթներ կախեր են քի ամէն մարդ վախտը կիտնայ տէյի նայէ, հարս, սահաթը քանին է:

Հարսը, (ուշադրութեամբ նայելով) տասըմէկն է:

Վառվառ խաթուն.—Ինչի՛ս տասըմէկն է, մե՛ղայ. տահա օհարսակ պիլէ չէղաւ:

—Հարսը (որ ժամանակին շատ ճամբորդած էր թուէնով) ալաֆուանկայ է:

Վառվառ.—Մեղա՛յ, վախտին ալ ալաֆուանկան կըլլայ: Անանկ է նէ ետ տառնանք, հարս, հիմա չորս տին կը

կոցեն, սահաթնին տասնը մէկն է, կը-
սես կոր:

Հարսը.—Չէ: մի վախնար: նայե
անոր քովի սահաթն ալ 3 1|2 է:

Վառվառ.—Անանկ ըսէ՛ օր հասկը-
նամ, տասնըմէ՛կս ինչ է. անոնց խել-
քովը զայէր իրիկուն է, մեղայ. (Ա. Բ.
կարգերու սրահը տեսնելով դռնէն),
քա՛, սանկ նայե, հարս, քիպարներու
տուններուն պէս տոնաթմիշ են ըրեր,
չուխաներով, քաղմիրներով, զէյէր մեն-
ծերուն տեղն է, էրիկ մարդ կնիկ մարդ
տօտողվեր նստեր են:

Հարսը.—Ի քինճիով գացողները հու-
նա կը սպասեն մինչեւ որ թռէնը գայ:

Վառվառ.—Էյ մենք պիրինճիով
պիտի երթանք:

Հարսը.—Չէ, իւչինճիով:

Վառվառ.—Է՛ն վերը:

Հարսը.—Չէ, էն վարը:

Վառվառ.—Կը հասկնամ կոր. նշտն-
տուքի խաչերուն պէս էլա, էտնա:
էվատ:

Հարսը.—Անոր պէս բան մը:

Վառվառ.—Օտկի վրայ կը կայնե-
ցունեն:

Հարսը.—Չէ ամա, տախտակներու
վրայ կը նստեցունեն:

Վառվառ.—Մինտէր մը օլտուն ձը-
ղեցէք պարէ, տնաչէններ: (օրահին
խօրը պիւֆէն տեսնելով). Բա, աղջիկ
սա նայե, պիւթիւն անուշի թախըմ-
ներ, շուրուպներ, պաներ:

Հարսը.—Ուղողներուն կուտան:

Վառվառ.—Եօլճիներուն իբրամ կը-
նեն զայէր:

Հարսը.—Փարայով է:

Վառվառ.—Փարայով:

Հարսը.—Հապա փարայով, ինչ ըսես
կուտան, ըրախի պիլէ կայ:

Վառվառ.—Վույ կրող խմեն, վուր
երթաս նէ առ ալ կայ: Տօնսուզ օլուր-
լար ծնսուզ օլմաղլար:

(զանգակ մը կը հնչէ), աս ինչիս
չանկն է, հարս:

Հարսը.—Պիլէթ առնելու համար է:

Վառվառ.—(կիչէյին առջեւ խըռ-
նած բազմութիւնը տեսնելով) քա աս
ինչ է, իրար կուտեն կոր ծակին պե-
րանը:

Հարսը.—Իշատ պիլէթ կուտայ կոր:

Վառվառ.—Քա, չըմանցունեմ, կի-
տես քի մաս կը պաժնեն կոր:

Հարսը.—Կամաց ըսէ, ամէն մարդ

մեղի կը նայի կոր:

Վառվառ.—Էյ հիմա աս խառղա-
շալըխին մէջէն ընտօ՛ր պիլէթ պիտի
առնենք:

Հարսը.—Ես կառնեմ:

Վառվառ.—Քա խենթ էօ, ի՞նչ էօ,
փիտէ կը տառցունեն քեզի:

(Այս միջոցին հարսը չորս կողմը կը
դիտէր տոմսակ առնել տալու համար
յարմար մէկը գտնելու. երիտասարդ-
մը նշմարելով հարսին յօտեցաւ և սա
երկու տոմսակի ստակ տուաւ անոր
Ետտի—քուլէի համար):

Վառվառ.—(քիչ մը տաքութեամբ),
կը ճաշնայի՛ր այդ ճահիլը:

Հարսը.—Ո՛ւրկէ պիտի ճաշնամ. մե-
զի զահմէթէ աղատելու համար իշտէ
պիլէթնիս կառնէ կոր:

Վառվառ.—Էյ ինճի՛ ինչու չեկաւ
տէ քեզի եկաւ:

Հարսը.—Փարան իմ ձեռքս տեսաւ
անոր համար:

Վառվառ.—Ծատ պան: Չայէր, ետն
ալ խօլայութիւն ըլլայ տէյի քեզ կըր-
կեմ տէ առապան տնեմ ըսէ նէ չէ չի
պիտի ըսես:

Հարսը.—Անանկ բան չէն ըսեր:

Երիտասարդը (դառնալով և շնոր-
հալի շարժումներով առ հարսն): Ահա-
ւասիկ. մատամ, ձեր տոմսակները:

Հարսը.—Ծնորհակալ եմ:

(Երիտասարդը կը հեռանայ):

Վառվառ.—Քա սա կոտորտներին
նայեցէք:

Հարսը.—Քաղաքավարութիւնը ա-
սանկ կուզէ:

Վառվառ.—Իրար հոտվըտացէ՛ք կը
կրէ կոր քաղաքավարութիւնը. չամըչ-
ցածներ:

(դռները կը բացուին, հրաւերի-
ղանգակները կը հնչեն. երկաթուղու
պաշտօնեայք իրենց համազգեստներով
Վառվառ խաթունը կը շրջապատեն:

Վառվառը դիտելով, քա աս ինչ է,
ճէնէնալներ, քիւմէ, քիւմէ:

Հարսը.—Հայտէ տուտու, շուտ ըրէ,
թռէնը մեզի չի պէ. քիլէյէր, հիմա կառ-
նէ կը քալէ:

Քոնտիւքթոռ մը զիրենք 10 հօ-
գինոց բաժնի մը մէջ կը մտցունէ:

Վառվառ.—(Ամէն կողմ դիտելով,
չօշափելով) հարսնուկ, սա նայե, ինչ
ամուր քերէստէներ զարկեր են, տէ-
միրի պէս խալի:

Քոնտիւքթոռը դուռը կը գոցե
ուժգին. Վառվառ. վույ կուողին պէ-
րանը երթաս. աս ինչ տուռ կոցել էք.սիրտս բրթաւ, մեղայ. թէվէքէլլի աս
խըտար ամուր չեն շիներ. քա՛, մեր
տունը ըլլար նէ, աս կոցուելուն կը
փլչէք: կերերանք կոր հարս:

Հարսը.—Հիմա կելլանք:

Վառվառ.—Ըսել է քի արթըլս մարդ-
չի պիտի կայ հոռ. երկուքնիս աս ա-
ռալըիը թխմեցին վրաներնուս ալ կըղ-
պեցին քի չելլանք փախչինք:

Հարսը.—Ատէթը անանկ է:

Վառվառ.—Քա պէլքի մէյ մը վար
իջնալս կը պռնէ:

Հարսը.—Մինչեւ սթասիոն չեր-
թանք տուռը չեն բանար:

Վառվառ.—Վուր ըսիր:

Հարսը.—Սթասիոն:

Վառվառ.—Վույ երկու աչկըդ
չքեօնայ հէմէն. քա Ետտի—խուլէ
պիտի երթանք ըսելով ինճի առեր
վուր տեղուանք կը տանիս կոր:

Թռէնը ճամբայ կէլնէ, Վառվառ
խաթուն գլուխը պատուհանէն դուրս
հանելով, շփոթեալ, առապաճի, առա-
պաճի և քօնտիւքթոռ մը տեսնելով,
քա, սինեօռ, սինեօռ, տո՛ւր, տո՛ւր
տո՛ւր, քա, ինտոր ալ կը վազենք կոր:

Հարսը.—(քղանցքէն քաշելով), տու-
տու, աուտու. մի պօռար ատանկ,
խօքը չի հասկցած իրար կանցնիս կոր:

Վառվառ.—Խառնախօսի դայեկիդ, ես
քու աչկիտ կերեւամ, կայնէ:

Հարսը.—Քա, սթասիոն կըսեն նէ. . .

Վառվառ.—Ըսարկվի՛ս (նորէն դուրսը
դուրս հանելով) տուրուն, քա, խենթ
կովերու պէս ալ կը վազէ կոր:

Քոնտիւքթոռ մը—Նէ պօլլէ պա-
ղուսիօրսին:

Վառվառ.—Տուր, տուր, պէն աշաա է-
նէճէյիմ:

Քոնտիւքթոռ—Պուռուտա օլմաղ սթա-
սիօնտա էնէճէքսին աշաա:

Վառվառ.—Էյ պէն կիթմէմ օրայա:

Քոնտիւքթոռ.—Ներէտէ կիթմէսին:

Վառվառ.—Իշտէ ըստա . . սիսիօնա:
ազըմը ուչուրուրում հա:

Քոնտիւքթոռ.—Էօլլէ խսէ պէն սէնի
Ետտի—քուլէտէ կէօթիւրէճէյիմ:

Վառվառ.—Վույ սաղ օլասըն, օրերդ
չատ ըլլայ: (Ներս քաշուելով առ հար-
սըն) ծակճկող,

Հարսը.—(սաստկութեամբ) մի խեն-

Թե՛նար, տուտու, սխախոն տէյի հան-
դպած իսկէլէին կըսեն:

Վառ.—էյ հապա սանկ չըսես, ին-
ծի մահման տողերը տարիր:

Քոնտիւքթուրը տոմսակնին կը ծա-
կէ. Թուէնը Քոււ-քարուն անցնելով
Եէտի-քուլէ կը դիմէ սրընթաց:

Վառ.—Քա քիչ մը կամաց ալ չի
քալեր քի չորս տինիս տեսնանք. սա
ծովերուն ազուորութիւնը նայէ հարո-
Պրուխը պատուհանէն դուրս) սինետու)
սինետու. պիր ալ եավաչ չէքտիր, մե-
ղայի Եէտի-քուլէ եէրինտէն գաչմագ:

Հարսը.—Քա, տուտու, աս քու գիտ-
ցած առապաներդ չէ, ալ հոգիս կը
հանես կոր, աման, տունը թիւուլիւ մը,
տուրսը թիւուլիւ մը. հազար տարի պո-
ռաս նէ անոնք իրենց գիտցածէն շաշ-
միչ չեն ըլլար:

Վառ.—Պէտիհալա կը տանի կոր,
փարայովնիս չէ՛ մի. մե՛նք անոնց թա-
պի ենք չէ նէ անոնք մեզի, շատ պա՛ն:
Նայէ, նայէ, նայէ ինտոր մտիկ ընել
տուի. կը կայնի կոր կիտես քի.

Հարսը.—Հէլպէթտէ պիտի կայնի.
Եէտի-խուլէ եկանք:

Քոնտիւքթուրը դուռը կը բանար:

Վառ.—Քա վա՛յ մեղքիս, տահեկի
երթալու է աս մարդուն արապայովը.
քա արձապա վերուսաղէմ քանի՛ բա-
րա կը տանի:

Կեղնեն:

ԳնՈՒՆԻ

ՊԱՌԱՒԱՆՑ ԲԱՌԱՐԱՆ

- 1—Ալլըման—աննըման
- 2—Անկաճ—ականջ
- 3—Առդա—ակոայ
- 4—Արմըննալ—զարմանալ
- 5—Բախլայ խորան—փակեալ խո-
րան
- 6—Չարգարդար—ճաղկազարդ
- 7—Էտինք—Երկայնութիւն տուրնջ-
եան
- 8—Էճիլ—զեփիւռ
- 9—Ժմնել—ժամանել
- 10—Իդժուն—յիսուն
- 11—Խաթուն—պառաւ կին
- 12—Կաղընդ—կաղանդ
- 13—Աալուր—ալեւոր
- 14—Հուկ—հնազանդ
- 15—Ճերմըկուտիկ—ճերմակ
- 16—Ճիվ—ոտք
- 17—Ճիվման—ոտնաման
- 18—Ճիտ—վիզ
- 19—Մեծաւոր—պատրիարք
- 20—Միաջէն—միականի
- 21—Չրթնել—ստել
- 22—Պանլիք—բանալի
- 23—Պարկենտանք—բարեկենդան
- 24—Վժկին օրը—վիճակ
- 25—Տէրինտաս—Տեառնընդառաջ
- 26—Տրպատուն—վարժարան
- 27—Փաթուր—ղինուր
- 28—Օհարսակ—կէս օր
- 29—Օրդաթի—որդի

(Շարունակելի)

Ֆ.

ԻԼԱՆ

Սէնէյի սապըզ միտիւլիւ շէօհրէթ-
շուար. Ալպանեալը մալիք վէ Թուհի
էֆէնտիլէրին եէտի իլէ, պու քէրրէ
Պէյօղլու ճատտէսինտէ Լիւքսէմպուրկ
գարշըսընտա 151 նիւմէրօլու տիւք-
քեանտա հէր նէվի էնվայի տօնտուր-
մալար ֆիրուլիթ օլունմագտա տըր
իսթէնիլէն հանէլէր իլիւն տախի կէօն-
տէրիլմէքտէ օլտուղունու մէղքիւր
տիւքեան սահիպի Գրիգոր էֆէնտի
Պապիկեան թարաֆընտան իլան օլու-
նուր:

ԼԱՔԷՍ ՏԱՍԻՒՐԱՆՍ

ՊԵՐԻ ՎԷ ՊԱՀՐԻ ՀԱՐԻՔ ՎԷ ՔԱԶԱՅԱ
ԳԱՐՇՈՒ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸ

Թէէ/ինաթ աքչէսի 50000000

Իհթիեաթ աքչէսի 300000

Ալթը սէնէի միւթէճավո զ Տէրստա-
տէթտէ իճրայի մուամէլէ իտ' կէլմէքտէ
օլան մէղքիւր քուսթանեանըն մու. մէլաթը
ճարիլչնին տահա պի, հիւսնի սուրէթլէ ճէ-
րէյանը զըմնրտա պու քէրրէ ումում մէ-
մալիքի օմանիլէ աճէնթալըը էօնտէի տ-
ճիզանէմէ իհալէ իտիլաիլինտէն պատմա
էմլաք վէ էշեա վէ սայիլրէ դայէթ միւթէ-
տիլ ֆիլյաթ վէ հաֆթալըք թէտիլաթ՝ շէ-
րաիթլէ տախի մուամէլէ իճրաթը վէ գազա
վուգուլի ազապինտէ թաղմին իտէճէլի
թաահիւտ իտէր վէ քուսթանիլը մէղքիւ-
րըն սապըք աճէնթալըք թարաֆընտան
չիմտիլէ տէլին հէր նէ գտտար բօլիցա
վէրիլմիլ իսէ նիհայէթ 31 կիւնէ գատար
լիէճլիւ թաստիգ:

Իչպու քուսթանեանըն թաղրա աճէն-
թալըքնա թալէպ պուլունտուղու թաղ-
տիրտէ մէրքէզ իտարէյէ միւրաճաաթլարը
թավիլիլէ օլու.նուր:

Ումում Թուրք'ա աճէնթալըք
Բ. Շէշիւրլեան

Մէրքէզ իտարէ Ստամպուլ Պահճէ գարու
Եօրիխատիս խան Նօմէրօ 1

Մէժ վաճառարան և գործարան Լամպայի և այլ
նիւնոց: Ալաճա համաճ թիւ 16 Էրճ է
Քէլէնճէլէր

ՏԵՐ ԵՒ ՏՆՕԷՆ
Յ. Թ. ՉԱԽՄԻՇԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգո՛վ
հասարակութեան թէ իւր վաճառա-
ատն մէջ կը շինուին և կը նորոգուին՝
կտարած, վնասուած, աւրուած եւրօ-
պական ամէն տեսակ գործիք. ինչ-
պէս կաղի կամ իւղի լամպաներ. աշ-
աանակներ. անկողնարանք. շիրինկա-
ներ. տուշեր սամավարներ և յախ-
ճապակեայ կտարած որ և է նիւթեր.
ըստ ամենայնի, մաքուր վայելուչ և նո-
րէն աւելի հաստատուն:

Լ Ա Ք Է Ս

Տ Ա Ս Ի Ի Ր Ա Ն Ս

Ա. ՊԱՀ ՈՎ Ա. ԳՐՈՒԹ Ե ԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԷՄ ՀՐԴԷՀԻ ԵՒ ԾՈՎՈՒ

ՀԻՄՆԵԱԼ ԲԱՐԻՁ

Քարիթո կարանթի 50,000,000 Ֆր.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԲՈՂՈՐ ԹՈՒՐԳԻՈՅ

Բ. Շէշիւրլեան

Կ. Պօլիս Պաղչէ-քարու Եօրիխատիս խան Նօ. 1

Նաեւ, սոյն վաճառատան մէջ կը գտնուին, եւրոպական ընտիր լամպա- ղեր, աշտանակներ ընտիր տպակի խո- ղովակներ որոց համար հասարակու թիւնը միշտ կը գանգատի թէ չկան աստ. կլօպներ և ամեն տեսակ պատ- րոյկներ, մէկ խօսքով, լանայալի վե- րաբերեալ ամեն բան ինչպէս նաեւ պանեօ և չինկոյէ լուացարաններ և տուշ ընելու համար պէտք եղած ա- մէն կերպ գործիք :

Գիները յոյժ չափաւոր են. զի մեր գործարանի սկզբունքն է ճՇԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՌՍԱՐՄ ՈՒԹՅՈՒՆ :

***—Փորձով գիտեմք և բնաւ տա- րակոյս չունիմք թէ յիշեալ ճարտա- րարուեստ ազգայնայն գործերէն մե- ծապէս գոհ պիտի ըլլան մեր ազգա- յինք և այլ եւս իւրեանց, այս կարգի պէտքերն հոգայու համար սիրայօժար պիտի գիմեն նոյն վաճառատուն և գործարանը, փոխանակ այլ տեղեր յաճախելու, մինչ սա փտահուլթեան ամէն պայման կ'ընծայէ իւր յաճախոր- դաց :

Օ՛ն ուրեմն, գիմեցէք անդ և փոր- ձեցէք :



ՄԱՅԻՐ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸՆԸՆ ՐՈՒՊԱ ՄԱՂԱԶԱԼԱԸ

ՊԵՅՈՂԼՈՒ ԹՈՒՆԷԼ ԳԱՐՇԸՍԸ
ՍՏԱՄՊՈԼ ՔԵՕՓՐԻԻ ՊԱՇԸ

Պէտիւք ատամլար, գարլար, տէլիգանլար, գըզլա վէ չօճուգլար իչիւն հողըր վէ ըսմարլամա էնվայի բուպա- ւար, ֆանէլար, շէմսիչէլէր, էլտիվէնլէր վէղայրիհիւմ վէ դայրիհիւմ :

Հէր օն պէշ կիւնտէ մէվսիմէ մախսուս մօտա մալլար վիւ րուտ իտէճէք տիր :

Սաթըլան մալլէրին քեաֆֆէսի պիրինճի վէ տայանագլը վէ տիւզկիւն մալլար տըր :

Մայէր գումբանեասընըն գախտէսի տայմա շէթի վէ էշ վէն ՄԱԼ ԱՍԹՄԱԳ տան իպարէթ պուլունմուշ օլտուղը պիր գէյարէթլէ մաղազամըղը թէշրիֆ իտէն բաղպէթլու միւշտէրիլէր կէօրէճէքլէր տիր :

Շիւպէ

Շիւպէ

ԻՍԲԷՆՏԵՐԻՑԷ ՎԷ ԳԱՀԻՐԷ

ԻԶՄԻՐ ՎԷ ՍԷԼԱՆԻԿ

Հայտէյին պագալըմ ՄԱՅԻՐԻ՛

կեանքն : Իւր սէրը ծաղկազարդ կը մնար և չէր մտածեր թէ օր մը կրնար թառամիլ իւր արտասուաց ներքեւ :

Մինչեւ այն ժամանակ, իւր միակ վիշտն էր այն գաղտնիքն զոր ծածկած էր իւր հօրմէն :

— Այդպէս հարկ է, մեր սիրոյն պաշտպա- նութեան համար, ըսած էր նմա էտմօն :

Իւր սէրը երբ պաշտպանէր, իւր կեանքը պաշտպանած կըլլար : Լուութիւն պահեց :

Ոսկայն հակառակ իւր կանխազգացումե- րուն, Լիւսիլ մտքէն չէր անցներ թէ հայրը պի- տի կարենար գոնէ իւր գաղտնեաց մէկ որոշ մասին տեղեկանալ :

— Սիրելի էտմօն, ըսաւ ինքնին. նամակը կարգալէն վերջ, պիտի մեկնի, որոշում տուած է . . . այո՛, այսպէս հարկ է, օրերը կը սահին, ժամանակը կ'ստիպէ . . . Ո՛հ, պիտի յաջողի, սիրտս կը յայտնէ զայդ : Բաւական չէ կրած տառապանքը : Աստուած որ կը պաշտպանէ իւր արարածներն, զայն յուսահատութեան եր- բէք չպիտի մասնէ : Զուգեր հեռանալ. Ա՛հ. ես և ո՛չ նուազ յուզեալ և վրդովեալ եմ. Այո՛. այսպէս հարկ է, երջանկութիւնը զոհօ- ղութեամբ կարելի է վայելել : Այս գիշեր իւր

— Ժաք, յանուն այն կնոջ զոր այնքան սիրեր էիր. որոշումէդ հրաժարէ՛ : Աղջիկդ կան- չէ՛, իրեն հետ խօսէ, հարցաքննէ՛ զնա :

— Ո՛չ, ազատ թո՛ղ զիս, և ըրէ՛ ինչ որ կը հրամայեմ քեզ, կուզեմ որ այս գիշեր Լիւսիլ խոստմնապահ գտնուի իւր ժամադրավայրին :

Իրեն տրուած հրամանին հնազանդիլ պէտք էր. ուստի և նամակը որովմէ մէջ դրաւ, շար- ժուն քարին ետեւ : Մյո՛ր գործը կատարելէն վերջ, ազարակին գործանորաց քով գնաց որք դաշտին մէջ կաշխատէին :

Ժամ մը վերջ, Լիւսիլ եկած էր այցելել որմն և նամակն առնուլ, կուրծքին մէջ պա- հեց, երկչոտ ակնարկ մը նետելով իւր շուրջն :

Ապահովեալ թէ ո՛չ որ կրցած էր զինք տեսնել, հեռացաւ աճապարանօք ազարակն վերադառնալու և սենեակը առանձնանալու համար, որպէսզի կարենար ընթեռնուլ թան- կագին տոմսն, աներկիւղ և անկասկած :

Պատճառ մը կար օրիորդին անհանգիստ և վրդովեալ լինելուն : Մեղապարտ էր խիղճը, չէր կրնար հանդարտ ըլլալ և յարատեւ կը գողգը- զար գաղտնիքը աչացը առջեւ բերելով, կը վախնար իւր ճակտին կարմրութենէն որ կրնար

ՅՈՎՆ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԸՆԿ.

45 Պեթյիւմ Միլիթր Խան, Գլխաբխա 45

Գ. Յարէ, Օոճ. Մէջադ. Բաղնապարտան վեր-

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՑՑՔ

ՊԱՏԻ, ԳՐՊԱՆԻ, ՈՍԿԻԷ, ԱՐՄԱԹԷ

ԵՒ ՆԻՔԷԼԷ

ԳՈՂԱՐԵՂԷՆՔ

Ապարանջաններ, Պոռններ, Օղեր, Մա- տանիններ, Մեռայեռններ, Գաւազանի սը լուխներ և այլն:



Այս բոլոր ապարանջանները բերուած են Եւրոպայի լաւագոյն գործարաններէն և իրենց ճաշակն, քրտիք և ընտրութիւնը կարգաբացնեն այն համեմատաբար համեստ գլխն որով ի վաճառ հանուած են:

Փոքրաքանակ և մեծաքանակ վաճառում

Վաճառատունը յանձն կտունու ամէն տեսակ նորոգումներ, ժամացոյցի և գոհա ղինաց յանձնարարութիւններ:

Կարէ յետեաներ կը նորոգուին յետաճ Գործարան Ժամադրոճ Զենոճ Մերճանեանի:

ՖՈՒՐԹՈՒՆԱ

ԱՆՕՆԻՄ ՈՒՄՈՒՄԻ ՍԻԿՈՒՐԹԱ

ԳՈՒՄԲԱՆԵԱՍՏ

1868 րէ Պերլէնպէ Բեկտիս օլունմաւ րոք

ՍԷՐՄԱԵԷ

1,875,000 ՅՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 1,337,500

Տէրտատէթ բիւջապընտա պիրլէշմիշ օան իշպու սիկուրթա գուճըանեալարը, քէֆալէթի միւթէգապիլէ իլէ հէր նէվի էմթաա վէ ազէ կրուօլարընը, տէնիղ, էհր վէ գալա նազլիեաթը թէհլիքլէրիէ գարըը զայէթլէ ֆաեիտէպալա շէրաեիթ լէ սիկուրթա իտէրլէր:

ՏԻՒՍԷԼՏՈՐՔԷՐ

ՏԵՆԵՁ, ՆԷՂՐ ՎԷ ԳԱՐԱ

ՈՒՄՈՒՄԻ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍՏ

1745 րէ Տիւսէլտորքէր Բեկտիս օլունմաւ րոք

ՍԷՐՄԱԵԷ

3,750,000 ՅՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 3,099,367. 15 ՅՐ

ՀԱՆՁԷԱԹԻՇԷ

ԵԱՆՂԸՆԱ ԳԱՐՇԸ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍՏ

1874 րէ Համպուրլիս Բեկտիս օլունմաւ րոք

ՍԷՐՄԱԵԷ

3,750,000 ՅՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 600,000

Իշպու սիկուրթա գուճըանեալարը, հէր նէվի էմթաք վէ էշեաեշ, անպար վէ մաղա գա աէրուէլէրինաէքի էմթաաեը, էն զիտատէ ֆաեիտէպալաշ շարթլար իլէ սիկուրթա իտէր: Թափիլի մալիւմաթ ալմազ իսթէեէնլէր, պալէատէ ղիքը օլունման իւշ գուճ բաեալարըն ումուճի մասլահաթ կիւզարը պուլունան իսթանպոլտա Պահլէ-Գաբու սունտա Բասիմ բաշա խանընտա նիւմէլի 13 վէ 14 տէ ՏԻՐԱՆ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԷՔԷՆ-տիեէ միւրաճաաթ իթմէկէ տալէթ օլունուր:

զինք մատնել . կը վախնար իւր հօրմէն որ կըր նար աշացը մէջ կարգալ իւր յանցանքն :

Իանի մ'օրէ ի վեր —ինչ որ ինք արդէն կը գուշակէր :

—Ժաք Մէլիէ տխուր և մտահոգ կ'երեւէր . երբ չէր ուղեր այլ եւս խօսք մը և առանձին կուզէր մնալ :

—Ատուած իմ, արդեօք բան մը կասկած ունէր, կը հարցնէր սոսկմամբ :

Այս խորհուրդը կը բաւէր զինք ահաւոր մտատանջութեան մը մէջ ձգելու : Բայց ինք արիաբար դէմ կը դնէր իւր երկիւղներու, իւր սոսկմանց, իւր կանխագուշակութեանց և ապագայի վրդովմանց . Անոր համար կը տառապէր, այն անձին համար զոր բոլոր հոգւովը կը սիրէր, այն վեհ և պաշտելի սիրովը որ անձնուրութիւն միայն գիտէ և զոհողութիւն միայն կուզէ ճանաչել :

Երիտասարդ, գեղանի էր, հարուստ, կը կասկածէր : Բայց ազնիւ սիրտ մ'ունէր, բարձր ոգւոյ մը կարողութիւններն, քերթողի մը ամէն գաղափարներն և խանդավառ երազներն, այն ամէն բաներն որք մանկամարդ աղջկան մը վառ երեւակայութեան հետ կը խօսին :

Գիպուածաւ իրարու հանդիպած էին օր մը, գիւղակին, տօնի մը մէջ . առաջին ակնարկ բաւեղաւ համակրութիւնը ծանուցանելու . կայծակն չէ աւելի արագ բան այն կարգ մը յուզումներն, որք սրտէն կը բղխին : Դժգոյն և տխուր էր նա, կը տառապէր . դժբաղդ էր . . . համակրութեան վերջ, շա՛հ : Պատմեց իրեն ինչ որ գիտէր իւր անցեալէն, տխուր կեանք մը, լքեալի մը կեանքն, զուրկ մօր մը խանդաղատալից համարոյններէն և ինամքներէն :

Լիւսիլ ջանաց մխիթարել զայն և ապագայի գեղեցիկ աւուրց յոյսը տալ նմա : Աւելին ըրաւ . սիրտ մ'ունէր, զայն տուաւ նմա . անգիտանալով թէ ծաղկաւէտ զառիվայրին ստորոտն կրնար անդունդ մը գտնուիլ :

Սիրոյ, մանաւանդ առաջին սիրոյ արբեցումն, կը պատճառէ այնպիսի շացում մը որ կը հրապուրէ և կը յանկուցանէ : Վեց ամիսներէ վերջ, Լիւսիլ սէրը ջնջուած էր . Անոր վըայ ունեցած միամիտ և վեհանձն վատահոլութեան մէջ, տակաւին տեսած չէր և իւր վիճակն իւր ճշմարիտ երեւոյթին ներքեւ . Կուրօրէն կը սիրէր զնա, առանց ակնկալութեան, և բացատի, արդէն շնորհած էր նմա իւր սիրտն և իւր